# ՀԱՆԴԷՍ ՀԱՆԴԻՍԻՑ
ԵՒ
# ԼՐԱԳԻՐ ԼՐԱԳՐԱՑ

## ՌՈՒՍԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ

**ՄՈՒՐՃ (2)։** — Լէօ «Հողից կտրուածներ» վերնագրով մի որոտաշարժ վիպասանութիւն սկսած է, ուր ընթերցողը կը գտնէ ազգային գիւղացիի գիւղասիրութիւնը, ազնուական ընտանեաց և ազգասէր բժշկի մը աղքատախնամ սիրելի և ընդօրինակելի գործերն։ Պ. Լէօ կը պատկերէ այն ապաստանարանը, ուր կը խնամուին Հայրենի աղէտներէն խուսափած հաշմանդամ, վիրաւորեալ և խօթացեալ Հայ գաւառացիներ։ — Յ. Խ. Մասեհեան թարգմանած է Սադի «Անձրեւի կաթիլը» գեղեցիկ առանաւոր բանաստեղծութիւնը, որ ցոյց կու տայ խոնարհութեան ընտիր արգասիքը․ ամպերէն անձրեւի կաթիլ մը կ'իյնայ որ

Երբ տեսաւ ծովը լայն,
Նա շիկնեց իր չափից։

Կաթիլը իմացաւ որ ովկիանոսի քով ինքը ոչինչ է․ բայց ոստրէ մը զայն կը կլլէ ու գոհարի կը փոխարկէ.

Եթէ նա բարձրացաւ,
Քանզի նախ խոնարհուեց։

Հ. կը գրէ Զէյթունի ներկայ անտեսական կացութիւնը։ — Ք. Օ. Ֆինլանտայի մի քանի գիւղացի հեղինակներու վրայ տեղեկութիւն կու տայ, և այդ գիւղական գրականութեան հիմնադիր Պիետարի Պէյվէրինտաի «Աստուծու տուած մարդը» անուամբ գրութեան թարգմանութիւնը կը հրատարակէ, ուր նկարագրած է գիւղէն փրթած և քաղաք ինկած գիւղացի ընտանեաց վերին աստիճանի նողկալի իմաստակութիւնն և ցուցամոլութիւնն։ — Աւոր կը յաջորդեն «Քամին է շաչում» քերթուածն։ Ա. Տօտէի «Ֆրօմօն կրտսեր» վէպի թարգմանութեան շարունակութիւնը։ — «Մշակ»ի կորովամիտ աշխատակիցն Հ. Առաքելեան Բաբիականութեան վրայ կը ներկայացնէ մի լուրջ ուսումնասիրութիւն, որ համառօտութիւնն է այն ընդարձակ յօդուածին, զոր անցեալ տարի հեղինակը կարդացեր է Փարիզու կրօնական ժողովին մէջ։ Այդ յօդուածին հետաքրքրական մասերն մեր ընթերցողաց կը ներկայացընենք.

«Երկու սկզբունք կազմում են բաբիութեան հիմքը միութիւն և համերաշխութիւն մարդկային ցեղի մէջ։ Բաբիութեան նպատակը՝ սրտերի թագաւորութիւնն է, հետեւաբար, աշխարհակալութիւն․ տիրապետութիւն, նուաճում, քաղաքական գաղափարներ գոյութիւն չունին նրա համար։ Բոլոր մարդիկ հաւասար են և եղբայրներ․ չը կայ ո՛չ մեծ, ո՛չ փոքր, ո՛չ ազնուական, ո՛չ գռեհիկ։ Բոլոր մարդիկ մի և նոյն հայրենիքի զաւակներն են․ չը կայ յատուկ հայրենիք։ Այդ առիթով Բէհան ասում է, թէ Լաւագոյն էր, եթէ բոլոր ազգերը, ամբողջ մարդկային ցեղը ունենար մի լեզու և մի ընդհանուր գիր։ Բոլոր ազգերը լաւ են Աստուծոյ առաջ, չը կայ ընտրեալ ազգ, չը կան ընտրեալներ... Ահա գլխաւոր կամ տէրունական աղօթքը — Խոստովանում եմ, ո՛վ Աստուած, որ դու յայտնեցիր ինձ ճշմարտութեան արեգակը, վկայում եմ, որ չը կայ ուրիշ ճշմարտութիւն բացի նրանից․ դաւանում եմ, որ ոչ ոք չէ կարող ոչ քեզ գովել, ո՛չ քեզ երեւակայել։ Ո՛վ իմ Աստուած, մի՛ մերժիր մարդու, որ իր յոյսի մատներով կախ է ընկնում քո ծոցից»։

Ա. Շահնազարեան «Վարպետի յաճախորդները» վերնագրով Կողբ նահանգի գիւղացւոց արբեցողութիւնը կը վիպագրէ, ընթերցողին ներկայացընելով իրական պատկեր մը․ վիպասանը բոլորովին յաջողած է վէպին կենդանութիւն տալուն մէջ․ նա զզուանք կը գրգռէ դէպ ի ամենէն վատ ախտն՝ արբեցողութիւն։ — Լէօ մեր Հիմնադրին կենսագրութիւնը կը շարունակէ, և մեր վանքին սկզբնական ժամանակներն բաղդատելով եւրոպայի աշխարհական գրական վերածննդեան հետ՝ վանքին մտաւորական գործունէութիւնը շատ ողորմելի կը գտնէ։ Գրական դասակարգի ծանօթ Բժիշկ Վ. Արծրունին քանի հինգ էջերու մէջ նկարագրած է Զօլայի գրականութիւնը և նոյն առթիւ վերլուծած է անուանի արձակագիր հեղինակին Fécondité գրքի բովանդակութիւնը։ Այդ յօդուածով ընթերցողը ամփոփ գաղափար մը կը կազմէ Զօլայի գրականութեան վրայ և նոյն առթիւ հանդիսատես կ'ըլլայ Գաղղիոյ ֆիզիքապէս այլասեռման։ Պ. Մալխասեան կը շարունակէ «Հայագիտութիւն» անուամբ յօդուածը, ուր Ագաթանգեղոսի վրայ ծանրանալով, կը յիշէ նոյն գրքին վրայ մինչեւ ցարդ շարուած ու թափթըփած կարծիքները։ Յօդուածագիրը այդ բազմաչարչար երկասիրութեան հեղինակ՝ ո՛չ Ագաթանգեղոս յատուկ անձ մը, այլ Կորիւնը ենթադրելն՝ հաւանական կը համարի։ Պ. Մալխասեան իր այս և առոր նման բանասիրական ուսումնասիրութեանց մէջ յայտնի և որոշ իր միտքը կը պարզէ՝ առանց մանրամասն և աւելորդ ու ճապաղ թէական եզրակացութեանց մէջ խառնելու և միանգամայն խեղդելու ընթերցողին միտքը։ Յաւով ենք որ այս ուսումնասիրութիւնը առանձին լոյս տեսնելով՝ ամէն գրասէր անհատներու ձեռքն եթէ անցնի՝ դիւրին պիտի ըլլայ՝ որոշ ու ամփոփ գաղափար մը կազ-

digitised by A.R.A.R.@

մել մինչեւ ցարդ մեր նախնի մատենագրաց վրայ թեր ու դէմ ուսումնասիրութեանց մասին։ — «Գող» Նեկրասով։ — «Ո՞վ էր Լավուազիէն» այս վերնագրով «Մուրճ»ը հինգ էջ նուիրեր է Լավուազիէի պէս մի մեծ անձին, որուն գործունէութեան պատմութիւնը կարելի չէ որ խտանար այդքան տարածոցի մէջ։ Մեր կարծեաց համեմատ, Լավուազիէի գործունէութեան պատմութիւնը «Ֆրոմոն կրտսեր» թարգմանութենէն շատ աւելի գերադասելի է։ Բժիշկ. Վ. Արծրունի «Ամուսնութիւն» անուամբ յօդուածը հրատարակած է նաեւ «Մուրճ»ի այս պրակին մէջ. ընթերցողը նախորդ և ներկայ գրութեանց մէջ կը կարդայ ամուսնութեան պատմութիւնը։ Յօդուածագիրը առողջապահական կանոններու վրայ ծանրացած է, և ըստ անուանի բժշկաց վիճաբանական քննութեանց՝ պաշտպանած է միակնութիւնը, օրինակներով ցոյց տուած է մերձաւոր ազգականներու հետ ամուսնութեան ցաւալի վնասները. ազգերու թշուառութիւնը։ Ամուսնութեան խնդիրը այնպէս նկարագրուած է՝ ինչպէս որ բժիշկներն և կրօնքը օրինաւոր համարած են։ — «Վրաստանի միացումը Ռուսաստանին» Լէօ։ — Մատենախօսութիւն։ — «Տընտեսական հարցեր»։ — «Զ. Վերդի» Կարա-Մուրզա։ — «Ներքին Տեսութիւն» Լ. Ս. — «Գաւառական կեանք» Ա. ԴՕ։ — «Արտաքին տեսութիւն». «Պարբերական հրատարակութիւններ»։ — «Յարութիւն» Լ. Տօլստոյ։ — Ուշագրաւ է Լէօյի «Վրաստանի միացումը Ռուսաստանին» յօդուածը. որուն մէջ յօդուածագիրը ցոյց կու տայ որ այդ միացումը անհրաժեշտ էր և Վրաց համար փրկարար. մի և նոյն ատեն ընթերցողն կը տեղեկանայ թէ մի դար առաջ Վրաստան շնորհիւ երկպառակութեանց՝ որքան ողորմելի վիճակի մէջ էր։ — «Մուրճ»ը իր այս երկրորդ պրակով ընթերցողաց ներկայացուցած է 324 էջ գրութիւն։ Ներկայիս մենք ասկէ աւելի ճոխ պարունակութեամբ ամսաթերթ չունինք. ճիշդ է որ գինն ալ բաւական ճոխ է, բայց համեմատութեամբ բովանդակած հարուստ նիւթերուն, ոչինչ է գինը. ցանկալի է որ ամսաթերթը միշտ այս պատկառելի ճոխութեան մէջ մնայ։

ՏԱՐԱԶ. — (Թիւ 4–9) Ռուսահայոց այս ժողովրդական շաբաթաթերթը (4) կը շարունակէ ԺԹ դարու համազգային գրական և քաղաքական ընդարձակ պատմութիւնը։ Ա. Ղազարեան կը յիշէ ազգային որբանոցները և անոնց եղած նուիրատուութիւնները։ Ի մէջի այլ համառօտ յօդուածներու, կը պարունակէ հետեւեալներն.

«Մ. Մամուրեան», (5) «Կինը», «Փոթորիկ», (6) «Իմ յիշողութիւնները Ռ. Պատկանեանի մասին», Անդրպատականի Հայ վիճակը ԺԹ դարում», (9) «Բօէրները և իրանց նախագահ Կրիւգերը», «Խորէն Ստեփանէի յիշատակին»։

Այսքան յօդուածներու մէջ ամենէն շահեկանն է Ն. Շահազիզի Ռ. Պատկանեանի մասին երկար յօդուածը (6–9)։ Պ. յօդուածագիրը վեր կը հանէ ժողովրդական բանաստեղծին բնաւորութիւնը, անոր ծանօթ և անծանօթ երկերը հարեւանցի կ՚ուսումնասիրէ և կը գովէ բանաստեղծին երգիծաբան գրիչը։ Կը յիշէ թէ շատ մը երկեր ինչ առիթներէն գրգռեալ բանաստեղծը գրած է, կը պախարակէ լեզուն։ Այս ուսումնասիրութիւնը թէեւ հարեւանցի գրութիւն մըն է, սակայն ազգային բանաստեղծին ընդարձակ կենսագրութիւնը պատրաստողի մը համար՝ մի լաւ և օգտակար աղբիւր է։ — Իբրեւ գեղեցկագիտական յօդուած՝ գնահատելի է Պ. Մռնոեանցի «Կինը» և «Փոթորիկ» գրութիւնները, միոյն մէջ Դիք և Դիցուհիք ղեկավար են. և վիպական ոճով ցոյց կու տայ առաջին կնոջ ստեղծումը, միւսին մէջ կը պատկերէ հոգւոյն փոթորիկները։

ՄՇԱԿ. — (19) Թրքահայ լրագրաց մէջ Սանասարեան վարժարանի վրայ եղած խիստ քննադատութեանց խորխտալով արձագանգ կ՚ըլլայ։ Կը ցուցնէ ըսելու որ այդ կրթական հաստատութիւնը զինքը լրագրական այդ անողոք հարուածներու տակ արդարացընելու համար գրական և գրական ապացոյց մը չի տար։ — (23) «Տգիտութեան զոհեր», այս վերնագրով Դ. Տէր-Զաքարեանց Գանձակ գաւառի մէջ բոյն դրած մի վատ բարքի՝ մանկական հասակի մէջ կատարուած ամուսնութեան դէմ կը բողոքէ և միակ յոյս այդ կործանիչ բարքի տապալման, առողջապահիկ գիտութեան ծաւալումն կը գտնէ. ճիշդ է յօդուածագրի նկատողութիւնն. և ո՞վ պէտք է ուսուցչի պաշտօնն կատարել։ Յաջորդ պրակին (24) մէջ այս խնդրոյ նկատմամբ հետեւեալ մխիթարական ազդն կը կարդանք.

«Մշակի աշխատակից բժշկապետ Վ. Արծրունի ձեռնարկել է հրատարակելու մի շարք հանրամատչելի ժողովրդական բրօշիւրներ բժշկական — առողջապահական բովանդակութեամբ».

Լրագիրը կը փութայ ըսելու՝ որ այդ պատուական բժիշկը կարօտ է նիւթական միջոցներու, և առանց անձնական զըրկանքներու և զոհողութեան՝ կարող չէ իր գեղեցիկ ձեռնարկն իրագործելու։ Լրագիրը դարձեալ հարուստներուն կը դիմէ, որ ձեռք տան այդ օգտակար գործին։ Բայց ինչո՞ւ միշտ և նոյն իսկ ամենաողորմելի նպատի մը համար կրեսոսներու դիմել։ Վաղարշապատի մէջ հայութեան սիրելի սիրտ մը կայ, ուր անընդհատ թափուեր են ու կը թափուին շատ մը կրեսոսներու և միջակ կարողութեան տէր անձանց նուէրներն, չռայլ գանձերն և պարարտ կտակներն. անաչառ լրագրութիւնը՝ թո՛ղ զարնէ այն հաստատութեան դուռը, թո՛ղ խարազանէ անոր ապարանքին ծուլութիւնը, մեռելութիւնը, անգործութիւնը. ինչո՞ւ հոն չի տպագրուին ժողովրդեան կենսական օգտին անհրաժեշտ կարեւոր գրքոյկներ։ Ինչո՞ւ գործօն կտակները յաւզել և անգործները լճացնել թողուլ. քննադատութեան մուրճը թող հարուածէ բարքերու վատութիւնը. թո՛ղ հարուածէ անաչառութեամբ։ Մեր այս խորհ-

digitised by A.R.A.R.@

հրրդածութիւններէն յետոյ ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք «Մշակ»ի «Մեր հոգեւոր հաստատութիւններու շուրջը» յօդուածը. Ելի՞ն հին ջուրը, հին ջրաղացը? (25) Մամուլ բաժնի մէջ Մխիթարեան երկու հանդէսները իրար հետ կը բաղդատուին։ Լրագիրը մեր «Ուր գաղթել» յօդուածը վերլուծելով, զմեզ գաղթելու խնդրոյն պաշտպան կը կարծէ. բայց մենք ալ իրեն Ո՛չ կ՚ասենք. «Մշակ»էն աւելի մենք հակառակ ենք գաղթականութեան պայմանաւ։ «Մշակ»ի ուշադրութիւնը կը հրաւիրենք մեր նոյն յօդուածի հետեւեալ տողերուն վրայ (թիւ 2. էջ 55). «Երբ ձախատագիրը հայուն վըրայ կը ծանրանայ, կը ստիպէ թողուլ իր ծննդավայրը. գաղթել, ստանդական, թափառական կենցաղ մը վարել». որոշ չեն ընդգծեալ բառերու ոգին։ Մեր գաւառացիները եթէ կարող չեն արցունքով մարել հրդեհը, և հառաչանքով փչել ու ցրուել որոտացող և չանթաբեր ամպերը, այն ատեն գաղթել մենք մեր առաջին գաղափարը կը պաշտպանենք. դուք ձեր փողը հնչեցուցէք. մենք մեր զանգակը... (26) «Ո՞վ է յանցաւորը» մատենախօսական։ — «Դէվէրը ծուղակի մէջ»։ — (27-28) «Մեր ուսանողութիւնը» յօդուածով, ուսանող մը կը հարուածէ ներկայ ուսանողները. միթէ կ՚անիրաւէ՞. — (29) «Ինչքան ենք մօտ ժողովրդին» — «Մեր գրամատէրներին»։ «Ուաշտ»։ — (31) «Դքսուհի Գօղիվա» — «Ինչ է նայում, ինչ է մտածում Նոր-Նախիջեւանցին» Գր. Չալխուշեանէ։ — (32) «Մատաղ սերունդների ֆիզիքական զարգացումը»։ (36) «Հարիւր տարի» Վրաստանի Ռուսաստանի հետ միացման պատմութիւնն է, զոր Գ. Լեօ գրած է։ — «Շոգենաւանի ծովի վրայ»։ (37) «Պատկերներ Վանայ ներկայէն»։ — (38) Լեօի Մուրճը անհնելի ուժով կ՚իջնայ թանձրամարմին «Լումայ»ի վրայ և կը ճզմէ նորա աշխատակցաց «Տօքատական ցելինդրները»։ — (39) «Ալկօհօլիզմը մատաղ սերնդի մէջ»։ — Վան։ — (40) «Կարօտ գիւղացիների մէջ»։ — (41-42) Այս երկու թերթերու մէջ լրագիրը կը յուզէ օտար բառերու գործածութեան խնդիրը. Մեր մէջ գիտութիւնը մեղմօրէն ծաւալ գտնելով, այդ խնդրոյ վերջնական լուծումը անհրաժեշտ կ՚երեւի. բայց պէտք է խոստովանիլ որ լրագրական թռուցիկ գրչի մենամարտութեամբ՝ շուտով այդ խնդիրը չի լուծուիր. կարեւոր է լուրջ և գրական փաստերով մի երկար ուսումնասիրութիւն։ Այս խնդրոյ նկատմամբ, մենք բոլորովին համամիտ ենք «Մշակ»ին. և արդէն մեր ստուգաբանական յօդուածոց մէջ, ցոյց տուած ենք որ նոյն իսկ մեր լեզուին և գրականութեան հիմնագիրներն, չեն խորշած օտար ազգաց բառերու գործածութիւններէն։

**ԱՐԱՐԱՏ**. — (1900 թիւ ԺԲ. 1901 թիւ Ա. Բ.) Էջմիածնայ ամսաթերթը շատ դանդաղ լոյս կը տեսնէ, դեռ նոր ստացած ենք իր վերջին թիւը փետրուարը։ Իր երեք պրակներուն մէջ ի միջի այլոց կը պարունակէ հետեւեալ յօդուածներն։

«Աշխատանքի գաղափարը քրիստոնէութեան մէջ։ — Քանոնայական խնդիր։ — Անգլիական միջին կրթութեան բնորոշ գծեր։ — Արեւմտեան վանականութիւնը։ — Քննութիւն Ղարաքաղի քարքարանի։ — Եփրեմ կաթողիկոսի կոնդակը։ — Ս. Գ. Լուսաւորչի նորագիւտ կենսագրութիւնը։ — Հայ ժողովրդական առասպելները։ — Մայր աթոռի մատենադարանը։ — Յովհաննէս Ը. Կարբեցի կաթողիկոսի ազգաբանութիւն։ — Թուղթ Մխիթար վարդապետի, որ Գօշն կոչիւր։ — Ընտանեկան խաղաղութեան մասին։ — Գողթան երգերի առաջացութեան մասին։ — Շամիրամի առասպելը»։

Առաջին յօդուածը «Աշխատանքի գաղափարը» միթէ մորուկ մը չէ՞ Արարատայ մտերիմ ու խնամի դասակարգին։ Յօդուածագիրը կը փափաքի որ հայ ժողովրդեան բոլոր դասակարգի սիրտին մէջ անջինջ դրոշմուին առաքեալի խօսքերն.

«Որ ոչ կամիցի գործել և կերիցէ մի»
«Մի ձանձրանայք զբարիս գործել»։

Ամսաթերթը իրաւունք ունի փորձելու առաքեալի այս պատուէրները, որոնց գործադրութիւնը ժողովուրդը նախ քարոզիչներէն կը պահանջէ։

# ԹՐՔԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ

**ՄԱՍԻՍ**. — (1900 թիւ 39։ 1901 թիւ 12)։ Նահապետ «Մասիս»ը իր ծնունդէն սկսեալ մինչեւ ներկայիս միշտ փոփոխութեան մէջ է մերթ դէպ ի լաւն, և մերթ դէպ ի վատթարն։ Ներկայ «Մասիս»ը գրականապէս չէզոք դիրքի մէջ է, և այս ուղղութիւնը իրեն համար ստիպեալ կարեւոր է. Թերթը հաց կ՚ուզէ և իր ընթերցողները զուարթ ու զուարճալի յօդուածներ. այս տեսակ բաժանորդաց մէջ Գ. Շամտանճեան պիտի կարենա՞յ հաստատ պահել իր լուրջ «Մասիս»ը։ — Ներկայ «Մասիս»ի շահեկան յօդուածներն են.

«(1900-39) Քերթողութեան Ռահվիրայ մը։ — Վաղուան գրականութիւնը Ռ. Զարդարեան։ — (1901-1) Մ. Մամուրեան Տ. Արփիար։ — Փօստալ Գ. Զօհրապ։ — (2) Տ. Ա. Տիւսապ։ — (3) Մ. Մամուրեան Ա. Յարութիւնեան։ — (4) Մ. Մամուրեան Ռ. Որբերեան։ — (5) Յիսնամեակ մը։ — (6) Հ. Ասատուր Գ. Զօհրապ։ — Տ. Ա. Տիւսապ Ն. Ռ. (8) Հիւանդ էի եկիք տեսիք զիս Ն. Տէմիրճիպաշեան։ — Կինն իբրեւ օրէնք (Մատենախօսական) Յ. Գազանճ։ — (10) Գրական խնդիրը Ռ. Յ. Պէրպէրեան։ — (11) Բարեկրթութեան գեղեցկին Ն. Տէմիրճիպաշեան։ — (12) Աղաւաղեալ բառեր Յ. Գազանճ»։

Նահապետ թերթը իր այս յօդուածներով իր ընթերցողաց գրական հաճոյք կը պատճառէ։

digitised by A.R.A.R.@

Դիմակաւոր յօդուածագիր մը որ ընթերցողաց կ'ուզէ երեւնալ զուարթ և քննադատութենէ միշտ զգուշացող մը, բանաստեղծ Փանոսեանի կենսագրականին մէջ, ծայրայեղ գովասանաց մէջ կ'ընկղմէ նոյն ծանօթ բանաստեղծը։ — Լուրջ գրագէտն Պ. Ա. Ալպօյաճեան համառօտակի կը կատարէ յիսնամեայ «Մասիս»ի պատմութիւնը, և կը ճանչնայ նոյն թերթի հիմնադրին գրական մեծ արժանիքը. յօդուածին ամենէն շահեկան մասն է «Մասիս» թերթի կրած զանազան փոփոխութեանց թուագրական տեղեկութիւններն։ Այս առթիւ մենք պարտք կը համարինք ներկայ «Մասիս»ի վարիչներուն յանձնարարելու յիսնամեայ «Մասիս»ի գրական գործունէութեան վերլուծումը. որ թերթի յոբելեար հիմնադրին ամենէն համակրելի նուէրներէն մին կրնայ ըլլալ։ — Ե. Տէմիրճիպաշեան գեղեցիկ բարձր ճաշակով օժտեալ համառօտ դամբանագրով՝ կ'ողբերգէ վերջերս հանգուցեալ Տ. Մատաթեանի, Այվազեանի և Տիւսաբի վրայ։ Դեռ կը գրէ այդ ծանօթ բանաստեղծը. և նոյն իսկ մահճասարաւու հիւանդութեան մէջ նա մոռացած չէ ընթերցողը յուզելու իր մտքի ալէկոծութեամբ և լացընելու իր ողբերով։

ԲԻՒՐԱԿՆ. — (1-12) Պոլսոյ ազգագրական շաբաթաթերթը յունուար մէկէն սկսեալ, բոլորովին տարբեր ծրագրով լոյս կը տեսնէ Մեծ. Ց. Հ. Ճէճիզեանի խմբագրութեամբ։ Առաջին պրակին մէջ ծանր և մեծ խոստում մը կայ — «Բիւրակն» այս նոր դարուս մէջ օգտակար և կարեւոր դեր մը պիտի կատարէ մեր սիրեցեալ ազգին մէջ։ — Խմբագրութեան վրայ պիտի ճնշէին այն տողերը՝ եթէ անանքթէականապէս գրուած չըլլային. «Բիւրակն» օգտակար պիտի ըլլայ, եթէ քաջալերութիւն և համակրութիւն տեսնէ։ Նոր «Բիւրակն»ը կը բովանդակէ հետեւեալ գլխաւոր յօդուածները.

«20րդ դարու սեմին վրայ։ — Թէ ինչպէս գտնուեցաւ լոյսին արագութիւնը։ — (2) Միջազգային քաղաքականութիւն։ — (3) Մոլորակային բնակիչներ։ — (3) Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցը։ — (6) 19րդ դարու մեծութիւնները։ — (8) Հրատ։ — (11) Եւրոպական գրականութիւն։ — (12) Լրագրական դարագլուխ մը գերմանիոյ մէջ»։

Նոր «Բիւրակն»ի մեր առջեւ գտնուած առաջին երկու պրակներէն կրնանք հետեւցնել, որ այդ շաբաթաթերթը իբրեւ քաղաքագիտական թերթ, ունի իր յատուկ արժանիքն. Մեծ. խմբագիրն մանրամասն կը պատմէ նոր դարերու քաղաքական պատմութիւնը. օգտակար կը գտնենք նաեւ գիտական բաժինը։ Փափագելի էր որ ազգային գրականութեան և ժամանակակից կարեւոր տեղեկութեանց ալ պատ. խմբագրութիւնն աւելի կարեւորութիւն տար։ Նոր «Բիւրակն» առաւելութիւն մ'ունի իր պարունակած զանազան աղօթքներով. և այսու նա երբեմն կը շփոթուի աղօթագրքի մը հետ, բայց ամէն խմբագիր և ամէն գրիչ ազատ է իր գաղափարն յայտնելու և իր գաղափարով օգտակար ըլլալու իր ազգին. և անտարակոյս «Բիւրակն»ի պատ. խմբագրութիւնն ալ թերթին վերոյիշեալ ուղղութիւնն տալով պիտի ունենայ իր յատուկ նպատակն։ Կը մաղթենք որ ըստ պատ. խմբագրի փափաքին «Բիւրակն» իրօք ամենուն համակրելի ըլլայ և պէտք եղած քաջալերութիւնն գտնէ։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ. — (Թիւ 1318 — 1363). Այսքան թիւ թերթերու մէջեւ, ամենէն աւելի գրական և ազգային յօդուածներ կը գտնենք հետեւեալներն.

«Հայերէն լեզուի քանի մը խնդիրներ Դ. Խաչկոնց։ — Վիքթորիա։ — Վանայ ծովուն ոլորտքը։ — Քոյր Մոլորակը։ Պապա Համբարձում։ — Պաքուի մեծ Հրդեհը։ — Թոքախտն և իր դարմանը Տ. Դ. Ռէթէոսեան։ — Պարսկաստանի և Հնդկաստանի Հայերն։ — Հայ վանօրայք։ — Հ. Գ. Զարբհանալեան Դ. Խաչկոնց։ — Նոր վիճակ Ազգ. Հիւանդանոցին մէջ։ — Պ. Համբարձում։ — Շապին Գարահիսարի Հայ վանքերը։ — Որբերը Թոքախտաւոր Տ. Վ.։ — Հայ Արուեստագէտներ։ — Տ. Աստուածատուր եպիսկ. և Պ. Սամուէլեան Ա. Վ. Սամուէլեան։ — Ս. Ոսկան։ — Համբարձում Չերչեան։ — Ս. Ոսկան։ — Առապարի Զուարթնոց եկեղեցւոյն բեւեռագիր արձանագրութեան առթիւ Դ. Խաչկոնց։ — Պարսկահայոց վիճակը։ Գլուխս ողջ թուղթս մոխիր։ — Պուքրէշի Հայք։ — Գաղատիոյ Հայ վանքը — Կեսարիոյ Հայ վանքերը։ — Արեւմղալի վերլուծումը»։

Պ. Դ. Խաչկոնց երկու յօդուածներու մէջ կը պատկերէ հանգուցեալ Հ. Գ. Զարբհանալեանի բազմադիմի կարողութիւնը. նա կը սքանչանայ այդ սքանչելի բանասիրի և մատենագրի տաղանդին վրայ. մենք ուրախ ենք որ թրքահայ հասարակութեան մէջ, գոնէ թերթ մը միայն ԲԻՒԶԱՆԴԻՈՆ կարող է ըմբռնել ճշմարիտ գրականներու արժանիքն. և նոյն իսկ այս պարագայիս մէջ Պ. Բ. Քէչեան ցոյց տուաւ որ իրօք իր թերթն հայաբերը մըն է ազգին սրտին հետ խօսող և ազգին դրչին հետ ապրող։ «Բիւզանդիոն»ի կենսագրականին հետեւեալ տողերն Հ. Գ. Զարբհանալեանի արժանիքն կը դըրոշմեն.

«Հայ գրականութեան մէջ Հ. Գարեգին մեր Հայ Դպրութեան պատմութեան գայլեակն ու ստեղծողն է։ Եթէ Հ. Գարեգին չըլլար, չափազանցած թող չերեւայ ձեզի (բնաւ), ոչ Հ. Տաշեան մը պիտի կատարելագործէր իր ցուցակ հայ ձեռագրաց մատենագրական մասն և ոչ ալ եւրոպացի ս և է հայագէտ պիտի կարենար ամփոփ տեղեկութիւն մը քաղել մեր նախնեաց գրական գործերու վրայ։ Միայն, եթէ ստոյգ անելի կէտ մը կայ որ ստուեր կ'ածէ Հ. Գարեգինի համբաւին բանասիրական արժէքին, այն է իր թունդ պահպանողականութիւնը բանասիրական խնդիրներու մէջ... Վենետիկի հիմնական սկզբունքը զուտ յառաջդիմական է բանասիրական խնդիրներու մէջ»։

Մենք բնաւ այս տողերուն մէջ չափազանցութիւն չենք տեսներ. Պ. Խաչկոնց, տարիներէ ի վեր ապրելով հանգուցեալի բազմահատոր մատենագրական երկերու մէջ, թափանցեր է անոր բանասիրական ոգւոյն մէջ և ըմբռներ է անոր արժանիքն. արժանիք մը որ զարգացեալ բանասէրի անունը շորթողներուն ալ պարտական էր որ

digitised by A.R.A.R.@

ծանօթ ըլլար։ Պէտք էին երախտագէտ ըլլալ։

**ՍՈՒՐՀԱՆԴԱԿ.** — (894–639) Գ. Տ. Ճիվէլէկեանի ամէնէգին թերթը իր եռամեայ ընթացքէն ակսած է զարգացընել ծաւալը. ներկայ պրակներուն մէջ քաղաքական բազմաթիւ յօդուածներէն զատ, կը պարունակէ հետեւեալ գրական նիւթերն.

«Տարուբնականութիւն (Գրախօսական) Հասկաքաղ Գիշերուկ. — Պիթլիսլեցէն Մշոյ Ս. Կարապետի վանքը։ — Հայ թատրոնի կեանքէն։ — Ց. Կոլոտ Պատրիարք Կ. Պոլսոյ։ — Եկեղեցական արարողութիւնները ու երգեցողութիւնները։ — Տ. Հ. Սաւալանեան։ — Ս. Ոսկան։ — Խարբերդ։ — Պապա Համբարձում։ — Մալաթիայէն Այնթապ։ — Այնթապէն Եգիպտոս։ — Հայ Բոշաները։ — Եգիպտոսէն Նիւ-Եորք»։

Հասկաքաղ գիշերուան Տօքթ. Տաղաւարեանի Տարուբնականութիւն երկին վրայ ամփոփ տեղեկութիւն կու տայ և ընդհանրապէս այդ գրքոյկին նիւթին ջատագով ցուցուցած է ինքզինքը. իսկ տպարանէս լոյս տեսած Տարուբնականութիւն երկը, կ'անուանէ նոյն վարդապետութեան «Եղծ աղանդոց»ը. այս բացատրութիւնը ոչ վիրաւորական է և ոչ ջատագովական. միայն փափաքելի էր որ յարգ. յօդուածագիրը աւելի պարզ հասկցնէր իր միտքը։ Գալով գրասէր բժշկի նոյն տետրակին, մենք պիտի ըսենք որ այդ տետրակը պէտք չէր նոյնութեամբ հրատարակուէր, ինչպէս տարիներ առաջ։ Ժամանակին հետ իր պաշտպանած վարդապետութիւնն քննութեանց և քննադատութեանց ենթարկուելով, նա նոյն մնացած չէ, որով հին ջատագովութիւնն անթերի չի մնար. կարելի չէ՞ր ինչ որ հակառակ գրուած էր իր պաշտպանածին դէմ, գիտական փաստերով ջրէր — եթէ կարելի ըլլար։ Նոյն երկի գրախօսը՝ կը գրուատէ յարգելի տօքթորին գրական անխոնջ աշխատութիւնը, և այդ առթիւ՝ կ'ուզէ ցնցել շատ մը ազգային անգրասէր մտնապէտներն. բայց ո՞վ կարեւորութիւն կու տայ այդ մտրակներուն. գրելու մղորդել ոլիմպական գիտուն-ները՞ մեծ յանդգնութիւն չէ՞ !!! Ամենէն ծիծաղելի կէտն այն է որ այդ գիտուններուն մէջ կան նոյն իսկ անհատներ, որոց ծաղու նիւթ եղած է վերոյիշեալ բժշկի գրական գովելի գործունէութիւնը։ — «Սուրհանդակ» յիշեալ յօդուածներէն զատ, տեղ առաջնորդող յօդուածներ ալ հրատարակած է. այդ տեսակ գրութիւնները անհրաժեշտ են ներկայ տեղացի բարքերը ազնուացնելու, անտարբերութիւնը յուզելու, ազգային առողջ գաղափարները տարածելու։

**ԱՐԵՒԵԼՔ.** — (4548–4593) «Արեւելք»ի կեղծանուն յօդուածագիրներէն մին՝ առաջնորդող յօդուածով տեղացի ազգայնոց ուսումնական խորհրդոյ անդամակցած վիճակին վրայ կը գրէ, և այդ ցաւալի դերը Քաղ. Ժողովին կը վերագրէ։ Խեղճ Պոլսոյ հայք, աս մենծ աղաներէն ինչե՛ր կը քաշեն. ամէն մի կրթական յառաջադիմութիւն՝ խոչընդոտներէ զերծ չէ։ Տ. Մ. Վ. Բալուի նկարագիրն կ'ընէ. տեղւոյն անուանի բերդին վրայ գտնուած բեւեռագիր արձանագրութիւնները ըստ գերմանացի քննիչներու, Խալդեանց Մենուայի ժամանակակից կը համարի։ Տեղագրական տեսակէտով նոյն յօդուածը հետաքրքրական է։ Շարունակութեան մէջ (4553) կը գրէ.

«Աւանդութեան նայելով, Ս. Մեսրոպ Բալուի մէջ ունեցած է ճգնատուն մը, հոն՝ Աստուածային յայտնութեամբ ձեռք մը ուրուագրած է հայ տառերու պատկերները և Ս. Մեսրոպ անմիջապէս հրատարակած է զանոնք, ու այդ ճգնարանն ալ այդ իսկ պատճառաւ նուիրական, խնկելի և պաշտելի ուխտավայր մը դարձած է»։

Տեղացիներուն արտին մօտ ուխտավայրն է այն ճգնարանը։ Ըստ յօդուածագրին Բալուի Հաւաւ գիւղի գերեզմանատանց մէջ, բեւեռագրերով տապանաքարեր կը գտնուին։ Կը զարմանանք թէ տեղացի կրօնական առաջնորդը ինչո՞ւ ատոնցմով չէր հետաքրքրուէր և զանոնք ընդօրինակելով չի յղեր ուր որ անկ է և կարելի է զանոնք կարդալ. և ազգային պատմութեան համար ալ գուցէ նպաստաւոր բան մը գտնել։ Ծածկանուն յօդուածագիր մը Հ. Գ. Մ.ի «Գիրք գրելու արուեստը» անուամբ գիրքը կը որբագրէ. Վարժապետին ալ ուսուցիչ։ Քննադատը ցոյց տուած է գրքին մէջ ցանուցիր քերականական նշանաւոր և աննշան սխալները։ — Այս յօդուածներէն զատ ուշադրաւ կ'երեւին յաջորդներն.

«Վարագայ Վանք և Որբանոց։ — Թիլիպէ։ — Խարբերդ ու Երզնկա։ — Քննադատութիւն Մոնղոմերինի ուսումնասիրութեան վրայ Գ. Շահինեան։ — Բաղէշ։ — Ուռամուշ։ — Մշոյ վիճակը տարեկան տեսութիւն։ — Արաբկիրի բարբառը Դ. Գիրճ։ — Սղերդ։ — Ձեռագիրները գաւառներու մէջ Յ. Գ.։ — Տիարպէքիրի դպրոցները։ — Վան։ — Մուշ։ — Նիկոմիդիա։ — Բաղէշ և Տիարպէքիր. Կիւրին։ — Քղի Լ. Սրապեան։ — Ուաշ։ — Մեր եկեղեցական արարողութիւնները ու երգեցողութիւնները։ — Վան։ — Յոբելեան (Պերպերեան)։ — Կարապետ Տէտէեան։ — Եանկօ Երամճիշտը Սէօքիճվիչ։ — Երզնկայի կրթական գործը»։

Այս ամէն յօդուածներու մէջ տեղագրական տեսակէտով ամենէն աւելի հետաքրքրականն է և խնամքով գրուած Լ. Սրապեանի Քղիի նկարագիրն։ Յովհ. Գազանճեանի ձեռագրաց վրայ գրած յօդուածն շատ լուրջ դիտողութիւններ կը պարունակէ. նախ ընդհանուր հայ ձեռագրաց կարեւորութիւնը ցոյց կու տայ, կը պատմէ թէ գաւառներու մէջ ինչ յիմար կերպերով կը կորսնցնեն հայ գրականութեան այն անգին գանձարանները. կը յիշէ նոյնպէս Եւդոկիոյ մէջ, 163 օսմ. ոսկւոյ համար, առաջնորդարանին ձեռագիրները ծախելու պատմութիւնը. այս առթիւ յօդուածագիրը կը յանձնարարէ Կ. Պոլսոյ պատրիարքարանին, որ հրաման հանէ գաւառներու առաջնորդներուն, որպէս զի կազմեն իրենց վիճակի մէջ գտնուած ձեռագրաց ցուցակը, և առաքեն պատրիարքարան։ Այս կերպով Կ. Պոլսոյ պատրիարքարանը կրնայ ուշադրութիւն դնել գաւառի մէջ գտնուած ձեռագրաց, և առաջնորդներն ալ նախնեաց գրական գոհարներով շահավաճառութիւն ընելու շատ դիւրութիւն չեն ունենար։

digitised by A.R.A.R.@

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

**ԳՈՒԹԱՆ.** — (Թիւ 2) Պ. Մեծատուրեանի երկրորդ Թերթը լոյս տեսաւ. ճոխ պարունակութեամբ. շահեկան յօդուածներն են.

«Է. Բիւլէր (կենսագր.)։ — Գետնախնձորը պահել։ — Հողագործ. ծիծեռ գարուն վերջը։ — Կերերը։ — Կթելու արուեստը։ — Երկրագործին ամսացոյցը։ — Ցաքանը։ — Շերամաբոյծներու խրատ»։

Ու այժմ «Գութան»ը կարեւոր նիւթերու վրայ շատ համառօտ կը գրէ, եւ աւելի բազմակողմանի նիւթեր կը շօշափէ. լաւագոյն է որ քիչ նիւթեր բովանդակէ եւ անոնց վրայ լիուլի օգտակար տեղեկութիւններ հաղորդէ։ «Գութան»ը անշուշտ մի օր պիտի կարենայ Կ. Պոլսոյ երկու տարի առաջ հրատարակուած «Հանրագիտակ»ի օգտակար ծառայութիւնն՝ նման կամ աւելի լաւ կատարելու։ Յոյս ունինք որ «Գութան»ի խմբագիրն Պ. Մեծատուրեան իր թերթով հայ հողագործներու մի լաւ առաջնորդ պիտի ըլլայ, եթէ կարենայ նիւթական միջոցներով քաջալերուիլ. այժմ հայ թերթի ամենէն կենսականն՝ նիւթական է։

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆ.** — (1900-1. Թիւ 9-10)։ Այս պրակը ուշ հրատարակուեցաւ, խմբագիրներէն միուն ալբալի կորստովը։ Շարունակելի յօդուածներէն զատ կը բովանդակէ հետեւեալ նորերն

«Յ. Շաւարշ (կենսագր.)։ — Անժամկէտութիւն։ — Ուղեղային կեդրոններու դերը։ — Տրամախօսութիւն։ — Գիտութիւններու պատմութիւնը։ — Ոգելից ըմպելիներ։ — Գիրքեր ու թերթեր»։

«Համալսարան» կարեւոր եւ աւելորդ (վիպակներ, լեզուաբանական խնդիրներ) ճիւղերով պիտի ճոխացընէ իր ծրագիրը, նուազեցընելով իր գինը (10 ֆրանքի)։ Ուրախ ենք ըսելու որ «Համալսարան» գիտական յօդուածներու ալ աւելի կարեւորութիւն կ'ուզէ տալ, եւ արդէն իր ուսեալ խմբագիրներէն այդ կը պահանջուէր։

**ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ.** — (Թիւ 2) Հանդիսի վերջին (փետրուար) պրակը՝ հետեւեալ նոր յօդուածները հրատարակած է.

«Երուսաղէմի աւետարանը Ն. Ն. Խ.։ — Արեւմտեան մասին երկու խօսք Գր. Վանցեանցի։ — Նուրի-Ուրարտուի պատմութիւնը Յ. Վ. Սանտալճեան։ — Նոր հրատարակութիւնք»։

Սանտալճեան Յ. վարդապետի յօդուածն (որ «Բազմավէպ»ի մէջ հակառակ մեր ներկայ ծրագրին շատ էջեր չի կարենալով գրաւել «Հանդէս Ամսօրեայ»էն հիւրընկալուեցաւ) սկսած է ներկայացընել Նուրի-Ուրարտուի պատմութիւնը ըստ ասոր, եւ պարսիկ արձանագրութեանց. անտարակոյս այս հմտալից յօդուածը ոչ միայն նոյն պատմութեան հետամուտ հայագէտ պրոֆէսորներու հետաքրքրական կ'ըլլայ, այլ եւ բաւական օճան մը բեւեռագիրներու «տիլէտանտ» բանասիրաց քննական երկերու։

Հ. Ս. ԵՐԵՄ.

# Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

**ԿԱԼԿԱԹԱ. ՄԵԾ. Մ. ՍԵԹԵԱՆ.** — Անտարակոյս այժմ ստացած էք մեր նամակն։ Ցաւակցական գրութեան շնորհակալութիւն։

**ԶՄԻՒՌՆԻԱ. ՄԵԾ. Գ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ.** — Առաջարկութիւնք սիրով գործադրելի են, եթէ կաշկանդում չըլլայ։

**ՓԱՐԻԶ. ՄԵԾ. Տ. Ս. Պ.** — 3 անտերունչ «Որբունի»ներն ստացանք։

**ԹԱՒՐԻԶ. Պ. Վ. ԲԺՇԿԵԱՆ.** — Շնորհակալութիւն։ Շարունակեցէք միայն՝ կը խնդրենք որ անանք կրօնական կամ կղերական խընդրոց հետ մասն չունենան։

**ՌՈՒՍՃՈՒԿ. ՀԱՅԿ. ԸՆԹԵՐՑ.** — Կը խնդրենք կարդալ անցեալ ամսուան մեր թերթի ծածքին չորրորդ երեսի ազդը։

**ՏՓՂԻՍ. Պ. Յ. ԿԱՐԱՄՈՒՐՋԱ.** — Շնորհակալութիւն Ձեր համակրելի գրութեան։ Նոյն պայմանով կը յղենք երկու օրինակ «Բազմավէպ»։

**ԵՐՈՒՍԱՂԷՄ. ՊԱՏ. Գ. Տ. ՄԵՍՐՈՊ.** — Շնորհակալութիւն. կարող էք օգտակար լինել կենսագրական եւ պատմական գրութեամբ։

**ՏՓՂԻՍ. «ՄՇԱԿ».** — Ոչ միայն Զամչեանի այլ Գ. Արծրունիի պակասն ալ կը զգացուի։

---

Զմիւռնիայէն Մեծ. Գ. Տէր Մինասեան մի տարեկան «Բազմավէպ» նուիրեր է տեղւոյն ընթերցարանին։

Մեծ. Յովհ. Էֆ. Էսկիեան Պոլսեցի՝ մի տարեկան «Բազմավէպ» նուիրեր է Օվաճըքի (Նիկոմիդիա) Ուսումնասիրաց ընկերութեան։

digitised by A.R.A.R.@